

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԾԱՌԵՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՄ

Ս. Ս. ԶՈՇԱՏԱՇՅԱՆ

Գեղարվեստական յուրօրինակ լուծումներ տալով արդի շատ խնդիրների, մարդ անհատի ներաշխարհի բացահայտման հարցում խոր մտահոգություն հանդես բերելով՝ Մաթևոսյանը ոչ միայն պատկերում է տվյալ ժամանակաշրջանի մարդուն, այլև հերոսի մեջ բացահայտում է ազգային-ժողովրդական հոգեբանության էական գծերը, ժողովրդական մտածողությունը միահյուսում կյանքի սոցիալ-հոգեբանական տեղաշարժերի ընկալման հետ:

Գրողը ձգտում է «ճշմարիտ վերծանողը լինել նրանց ճակատագրի, ովքեր անհատականություն են, բայց կորուստների նվաճումների ամփոփագիր են մտնում որպես անդեմ-անանուն-անցավ սոսկական միավոր, մեծ ողբերգություններում միայն համր ֆոն են և վատ գրողների անգոր գործերում ամբոխ են կնքվում»¹: Արմատներով, կոշումով հողին կապված մարդու ձգտումը գյուղից քաղաք նշանակում է հրաժարում ծանր, հոգաշատ առօրյայից, կեցության հեշտացում, նաև հոգեբանության, մտածողության փոփոխություն: Այս իմաստով հետաքրքիր է Հրանտ Մաթևոսյանի «Ծառերը» ժողովածուի պատկերավորման միջոցների և դրանց ոճական առանձնահատկությունների քննությունը:

Հրանտ Մաթևոսյանի արձակում արդեն սովորական դարձած, հայտնի համեմատություններից բացի (առավելական համեմատություն, ծավալում, անուղղակի համեմատություն և այլն), ավելի հաճախ հանդիպում են նոր ու ինքնատիպ, հեղինակի անհատական ոճին, նրա մտածողությանը յուրահատուկ կառույցներ: Համեմատությունները ոճական տարբեր նպատակներով են գործածվում «Ծառերը» պատմվածքում, որտեղ համեմատության գեղարվեստական արտահայտչականության կարևորագույն նախապայման է համեմատվող եզրերից մեկի ընտրությունը, որպեսզի այն լիովին ծառայի իր նպատակին: Դրա համար այդ եզրը համապատասխանում է ամբողջ տրամադրությանը, խոսողի հոգեբանությանը, աշխարհաճանաչմանը, պայմանավորվում է երկի բովանդակությամբ՝ ստեղծելով միջավայրի, իրադրության գունավորում: Պատմվածքի հերոսուհին՝ Աղունը, իր հոր՝ Իշխանի հիշաչարությունը, նրա գործունյա և համար բնավորությունը ներկայացնում է հետևյալ համեմատությունների միջոցով. «Իմ հերը չէր մոռանում ... ոսկու պես ... իր պահած ոսկու պես մեկ այք առ էր ելնում իմ հոր հիշողությունը, մեկ թաքցվում, բայց երբեք չէր կորչում»²: Այստեղ հոր հիշողության և ոսկու միջև ուղղակի իմաստով, անմիջական ոչ մի կապ, ոչ մի նմանություն չկա, («ոսկի» բառը չունի այն իմաստը, որ ձեռք է բերել լեզվի զարգացման ընթացքում, այսինքն՝ թանկագին, արծեպվոր բան լինելու իմաստը), բայց հենց Իշխանի հիշաչարության հանգամանքը ստեղծում է որոշակի զուգորդություն, և դրանից ճնվում է ճշված համեմատությունը: Հեղուր «ոսկու պես» պահում, թաքցնում է իր հիշողությունը, որպեսզի «սրբած թրի նման դուրս քաշի իր հին հաշիվները» (434): Այսինքն՝ համեմատությունը կատարվում է համեմատվող երևույթներին հակադրական հատկանիշներ վերագրելու միջոցով:

Քանի որ հոգեբանական հակադրությունները պատճառ են դառնում խոր հույզերի և ապրումների, այդ պատճառով Մաթևոսյանը ամենախոր հույզերն ու ապրումները արտահայտում է հակադրության միջոցով: Համեմատությունների հետ առնչություններ ունենալով՝ հակադրությունն արտահայտում է ոչ թե առարկաների ու երևույթների ընդհանրությունները, այլ նրանց այն տարբերությունները, որոնք հակադրական են:

¹ Հր. Մաթևոսյան, Երկեր, հ. 1, Եր., 1985, էջ 6:

² Տե՛ս Հր. Մաթևոսյան, Ծառերը, Եր., 1978: Այսուհետ շարադրանքում կնշենք միայն էջերը:

Աղուճի կերպարի էությունը, նրա խոսքի ոճավորումը ավելի ամբողջական է դառնում իր մենախոսությունների ժամանակ: Մաթևոսյանը հետևողականորեն ուշադրություն է դարձնում ոչ միայն նրա խոսքի ոճավորմանը ընդհանրապես, այլև ըստ տարբեր իրավիճակների (որ դեպքում ում մասին է խոսում, և ինչու է արվում համեմատությունը), առանձին-առանձին ստեղծում համապատասխան ոճավորում: Աղուճը իր արտահայտությունների մեջ շատ ազատ է, ինքնավստահ. մի դեպքում նրա խորհրդածությունները ոչ միայն իր զավակին են վերաբերում, այլև համընդհանուր բնույթ են կրում: Մեկ այլ դեպքում նա անսպասելի, անակնկալ զուգորդությունների, անհամատեղելի եզրերի համեմատության միջոցով բնութագրում է իր զավակին: Այսպես, օրինակ՝ «Դու լավը չես: Ի՞նչ իմացողի հարցնում եմ՝ զովում ու ծիծաղում է - իբր թե լավն ես, խղճով ես, և էդ ծիծաղն իմ սրտին դանակ է դառնում, զավակս ...» (431): Կամ՝ «Խիղճ, խղճի վրա խիղճ ... ներսից խիղճ, դրսից խիղճ - դա խի՞ղճ է, թե փալասե տիկնիկ ...» (432): «Հիվանդ գառան համար լաց եք լինում, սիրուն հորթի համար լաց եք լինում - ձեր փորում տղամարդու սի՞րտ է, թե սազը ձեռին աշուղ» (ն.տ.):

Այս օրինակներում համեմատվող առարկայի և երևույթի նկարագրությունն ավելի լայն, ընդարձակ է տրվում, որի շնորհիվ ստեղծվում է մի ամբողջական, ավարտուն պատկեր՝ իր մեջ ամփոփելով կենսափիլիսոփայական հասկացություններ. այսինքն՝ խիղճը թելադրում է խելճության գաղափարը, և այստեղ ահա Մաթևոսյանի արձակը ձեռք է բերում մեծ խորհուրդ. «քանի որ ենթատեքստով ու կենսափիլիսոփայությամբ պաշտպանում է խղճի, ստեղծման ու զեղեցկության եզերքները, կենսական աղբյուրներ ստեղծող մարդկանց, որոնք ամեն ժամանակ ունենում են իրենց թշնամիները»¹:

Համեմատությունը կարող է կառուցվել մեկ կամ ավելի հատկանիշների հիման վրա, որոնք հաճախ լինում են ակնհայտ, տվյալ առարկային բնորոշ մշտական հատկանիշ, երբեմն էլ նույնիսկ անսպասելի, ոչ հիմնական, որ տվյալ դեպքում վեր է ածվում հիմնական հատկանիշի: «Միմյանցից հեռու և անհամատեղելի առարկաների ու երևույթների մեջ ընդհանրություն գտնելը և դրանք զուգակշռելի դարձնելը ոչ միայն նուրբ ճաշակի, սրամտության և բանաստեղծական շնորհքի, այլև իմացության արտահայտություն է»²: Համեմատության արտահայտման տարածված միջոցներ են շաղկապներն ու շաղկապական բառերը (որպես, ինչպես, կարծես (թե), ասես (թե), ոնց (որ), քան (թե), որոնցով ստեղծվում են յուրահատուկ կաղապարներ (այնպես ... ինչպես, այնպես ... որպես, այնպես ... կարծես (թե), այնքան ... որքան, այնքան ... ինչքան, այնչափ ... որչափ), կապերը (պես, նման, իբրև), ածականի համեմատության աստիճանները (ամենից, բոլորից, նվազ, պակաս, քիչ, հավասար և այլ բառերով ու ածականներով), ինչպես նախադասությունների յուրահատուկ կառուցվածքները: Վերջին դեպքում գործ ունենք ներքին, թաքնված համեմատության հետ: Մաթևոսյանի ոճին բնորոշ են հիմնականում ծավալուն, ներքին, թաքնված համեմատությունները: Երբեմն այս կամ այն իրավիճակի կամ կերպարի նկարագրության ժամանակ հեռավոր զուգորդություն է ստեղծվում խոսողների միջև, որը տեսանելի է դարձնում տվյալ իրավիճակը և միաժամանակ լրացնում, պարզաբանում է ասվածը: Իրենց ոճական երանգավորումներով ծավալուն ու ներքին, թաքնված համեմատություններին մոտ են զուգադրությունները (ոմանք ոճական այս հնարանը կոչում են նաև զուգահեռականություն)³:

Բերենք մի քանի օրինակ, որոնցում շատ դիպուկ ու պատկերավոր են ծավալուն համեմատությունները: Այստեղ միանգամայն տեսանելի է դառնում մարդկային վեհ արժանիքների պակասը. խիզախության, քաջության, արիության փոխարեն՝ տկարություն, անզորություն, խելճություն և այլն. «Մարդ ու անասուն իրարից ջոկվում են հիշողությամբ: Հիշողությունը դրած է անասունի և մարդու արանքում: Հիշողության մեջ ես՝ ուրեմն վատվում ես, մարդ ես, հաշիվներ ունես, անհանգիստ ես - հիշողության մեջ չես՝ հրեն բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների, իսկ հորթին երեկ են մորթել: Էն ծառը թե հիշողություն ունի՞ քոնոնք էլ ունեն: Քոնոնք կտրում են, մորթում են, զրկում են,

¹ Հր. Թամրազյան, Գրական դիմանկարներ, հոդվածներ, Եր., 1998, էջ 134:

² Պ. Պողոսյան, խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Եր., 1990, էջ 10:

³ Տե՛ս Լ. Եզեկյան, Հր. Մաթևոսյանի խոսքարվեստի մի քանի հարցեր, Եր., 1986, էջ 94:

ծաղրում են – քոնոնք իրենց հիշողությունից փախչում են, և նորից կզրկվեն ու նորից կզրկվեն ... ու նորից հիշողություն չեն ունենա, որովհետև վախենում են ծաղրի՝ բռունցքով ու զրկվելուն կտրելով պատասխանել ... Սիրում եք, քանի որ կծելու, կտրելու, զրկելու, ատելու տղամարդկություն չունեք ... տղամարդու պես մի անգամ կանգնեք՝ թող ձեզ գոռով ծալեն, դուք մի կտրվեք՝ ձեզ թող գոռով կտրեն» (433):

Այս հատկանիշները նկարագրելիս Հրանտ Մաթևոսյանը ստեղծում է ծավալուն համեմատություն, որ իր կառուցվածքով և բովանդակությամբ նույնանում է փոխաբերությանը, ավելի ճիշտ՝ վերածվում է փոխաբերության, քանի որ պատկերավորման այս ձևի մեջ առկա է «համեմատվող երևույթներից մեկի առարկայական հատկանիշների լրիվ չեզոքացում», որ փոխաբերության բովանդակային հատկանիշն է՝ Պարզ է, որ զուգադրությունների միջոցով, ինչպես այս, այնպես և նախորդ հատվածում Մաթևոսյանը ճիշտ ու նրբորեն է վերարտադրում իր հերոսների մտածելակերպը, բացահայտում ու պարզորոշ է դարձնում հերոսների հոգեվիճակը՝ համապատասխան և համոզիչ ռեալորմամբ, լեզվական բազմաթիվ միջոցներով ու ռեալկան հնարաններով:

Խորիմաստ զուգադրություն է նաև «Ծառերը» պատմվածքի այն հատվածը, երբ Աղունը նկարագրում է իր, հոր և պապ Ավետիքի (վերջինիս արյունն է փոխանցվել իր գավակին, որն էլ Աղունը համարում է իր որդու խեղճության պատճառը) բնավորության ընդհանուր գծերը. «Քո պապ Ավետիքի քնած, դանդաղ, բարի, էն էլ ես ինչ իմանամ բարի՞ թե վախկոտ չեղած մի պուտ արյունը էդ ո՞նց կարողացավ կտրել մերանի պես քո մեջ իշխանի տված էն կատաղի վարար արյունը, անդադար, խաբեբա, շողոմջոր, համարձակ, անքուն, վրիժառու, զգուս - զվարթ - ավագակ առնաուտի արյունը քո մեջ էդ ոնց կտրվեց Ավետիքի քնած մի պուտ արյունից» (432): Պատկերը ավելի սաստկական երանգ է ստանում, երբ համեմատության հետ միաժամանակ գործածվում են համեմատայունների հետ դրվող մակդիրները (կատաղի, անդադար, շողոմջոր, անքուն, վրիժառու արյունը և այլն): Այս օրինակում համեմատության առարկան մարդկային հատկանիշի այս կամ առանձին գիծն է, իսկ համեմատության միջոցը՝ կենդանիները, առարկաներն ու երևույթները, որոնք պայմանավորված են թեմայով, ստեղծագործության բովանդակությամբ, գրողի անհատական մտածողության ինչ-ինչ յուրահատկություններով:

Բացի բերված օրինակներից՝ հանդիպում են նախադասություններ, որոնց համեմատության մի եզրը գտնվում է մեկ այլ նախադասության մեջ: Օրինակ՝ «Հովհաննես Թումանյանը վա՞նք է, Հովհաննես Թումանյանը բանաստեղծ է» (455): «Մի՞նչ ամանս կլրցվեր ... մեկ էլ կատուն ֆոթաց ու փախավ՝ վառված: Ասում եմ հանգած կլի՞նի ու ոգու պես, ուրուի պես, չարքի պես կգա, կքսվի» (444):

Համեմատվող եզրեր են դարձել իրերն ու երևույթները, անձն ու կենդանին, ըստ որում իրը՝ մի այլ իրի, իրը՝ կենդանու, կենդանի՝ իրի, կենդանու հետ և այլն: Ինչպես օրինակ՝ «Երեխան շունիկի պես հևում ու գրկից շարտվում էր» (255): «Ջարկված հավքի պես լուռ բերանը բացուխուսի է անում» (446): «Ընագարի սրտի նման սիրտը զցում է» (453): «Հանարենու պես ինքը իր ներսում՝ մի ժամ տղան սպասում էր ...» (241): «Սակայն ցավը կգաքսի պես կպել էր ու պոկ չէր գալիս ...» (242): «Երեխան կատվի պես ժպտում էր բերնի անկյուններով» (242): «Խրտանած նախրի պես ժողովուրդն էր ցեղերով վազում է» (450): «... Լեռնանցքը լիզելով՝ ամպերը գողի պես կիրճ մտան» (269): «Հողը զվվում էր, գետի՛նը երզում էր եկելեցու պես ...» (305): «Կյանքն այդ ինչպես թանկացավ այնքան, որ պիտի մուրացվի հացի պես» (314): Անձին համեմատում է մեկ այլ անձի հետ. «Մի տարիքի էի, բայց նա կծկված մի բուռ հոգի էր, նա՛ թրջած կավ» (446): «Թումանյանը ռուսաստաններում մեռնում է, բայց քոնոնք էստեղ կան ... ձերոնք մի հերոսական, մի կարմիր, շրխկան մահ չեն ունեցել ... ծառերի պես կան, ոտի վրա փտում են, խոտի պես կան» (457):

Ինչպես տեսանք, վերը նշված օրինակներում համեմատությունները, բացի երկու առարկաների (երևույթների) միջև եղած ընդհանրությունները մատնանշելուց, միաժամանակ արտահայտում են հեղինակի (խոսողի) վերաբերմունքը համեմատվող առարկայի կամ անձնավորության նկատմամբ:

* Տե՛ս Լ. Եզեկյան, Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ռճը, Եր., 1975, էջ 183:

«Մտերը» ժողովածուի պատկերավորման համակարգում համեմատությունները ոչ միայն ներկայացնում, վեր են հանում առարկայի այս կամ այն հատկանիշը, այլև միաժամանակ արտահայտում են խոսողի, հեղինակի վերաբերմունքը, նրա տրամադրությունը այս կամ այն անձի, երևույթի, իրողության նկատմամբ: Համեմատությունը, որպես պատկերավորման հիմնական միջոց, իր բազմազան դրսևորումներով խորիմաստություն ու արտահայտչականություն է հաղորդում նրա արձակին և Մաթևոսյանի ստեղծագործության կարևոր առանձնահատկություններից մեկն է:

С. С. КОШАТАШЯН - Сравнения в сборнике Гранта Матевосяна "Дерева". - В системе изобразительно-выразительных средств языка сборника "Дерева" сравнения не только представляют, показывают ту или иную особенность предмета, но и выражают отношение говорящего, автора, к той или иной личности, явлению, к существующей реальности. Сравнение как изобразительно-выразительное средство языка в различных проявлениях создает в прозе Матевосяна особую художественную выразительность и, конечно, является одним из важнейших языковых компонентов стиля его произведений.